ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ 3304, ք.Կապան, /+37460/720072, kapanmayor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2026 թվականի N 257-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 1-րդ կետը, ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2026 թվականի ապրիլի 8-ին նշանակել մրցույթ հետևյալ պաշտոնների համար՝

1)«Կապանի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

2)«Կապանի թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

3)«Կապանի թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

4)«Կապան համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

5)«Կապան համայնքի տրանսպորտի ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.Աշխատակազմի քարտուղարին՝

ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

2026թ. մարտի 06

ք. Կապան

Հաստատված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի
2026թ. մարտի 06-ի թիվ 257-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքը հայտարարում է մրցույթ՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1.«Կապանի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան Մ.Պապյան փողոց 14

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 233244 (երկու հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ է:

2.«Կապանի թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան Հալիձոր թաղամաս 8

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 233244 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

3.«Կապանի թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Ձորք թաղամաս 20

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 233244 (մեկ հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ է:

- ***1-3 կետերում նշված թափուր պաշտոնները գործառույթներն են՝***

իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումն ու ղեկավարումը՝ այդ թվում՝ կազմակերպում է յուրաքանչյուր սանի կրթությունը նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

- ***1-3 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար՝***

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

2) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).
3) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
4)պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Աշխատանքային օրենսդրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների և այլն):
Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝
1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

4. «Կապան համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Ռ. Մելիքյան փողոց 8/4 գրասենյակ
Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 762143 (յոթ հարյուր վաթսուներկու հազար մեկ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ է:

5.«Կապան համայնքի տրանսպորտի ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Գործարանային փողոց 36/1
Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 762143 (յոթ հարյուր վաթսուներկու հազար մեկ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ է:

- ***4-5 կետերում նշված թափուր պաշտոնները գործառույթներն են՝***

1) առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, միջազգային կազմակերպություններում,
2) տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
4) կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
5) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության աշխատողների կողմից իրենց պարտականությունների կատարման նկատմամբ,
6) ապահովում է աշխատանքային կարգապահության ներքին կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների պահպանումը,
7) կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում Հիմնադրի հաստատմանը,
8) տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,
9) բանկում բացում է հաշվարկային հաշիվ.

ստորաբաժանումների իրավասությունները,
11) հաստատում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների և կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր,
12) արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,և վերահսկում դրանց կատարումը,
13) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
14) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,
15) աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
16) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարականներ:
Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՈԱԿ-ի ոլորտի հետ կապված իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

- ***<u>4-5 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար՝</u>***

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝
1) բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
3)պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Աշխատանքային օրենսդրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների և այլն):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

<u>Մրցույթը կկայանա 2026 թվականի ապրիլի 8-ին ժամը 10:00-ին, Կապանի համայնքապետարանում (ք. Կապան, Չարենցի 1 հասցեում):</u>

1-5 կետերի թափուր պաշտոնների մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Կապանի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝
ա) դիմում
2) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
3) ինքնակենսագրություն.
4) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող

ուսումնական հաստատության տնօրենի դեպքում հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.
5) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
6)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
7) մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի.
Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2026 թվականի մարտի 24-ը մինչև ժամը 17:00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են ծանոթանալ **azdarar.am** և **kapan.am** կայքերից, ինչպես նաև կարող են դիմել Կապանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Կապան, Չարենցի 1, հեռ. 060720072, 060720074/ :

Կապան համայնքի ղեկավար ***Գևորգ Փարսյան***